Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-05-2022 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2021 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՆԵԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄՀԵՐ ՄԿՐՏՉՅԱՆ Փ. 5
1.3 Պետական գրանցման համարը		222.160.916939
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2016-07-14
1.5 ՀՎՀՀ-ն		00156064
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)60655885
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		vwfa.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@vwfa.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Զարուհի Մուրադյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	17	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
	Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում	49,919,800
	Աշխարհագրական նշումով գինիների համակարգի լիիրավ կիրարկում	993,000
	Կոլեկցիոն, ցուցադրական և մայրուտ այգիների մշակում, խաղողի հայկական սորտերի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրություն	6,271,960

	Հայկական խաղողի սորտերի բույրերի հետազոտում	930,800
	Գինեգործության և խաղողագործության զարգացման ռազմավարության մշակում	7,990,000
	ՀՀ-ում հայկական գինիների վարկանիշի բարձրացման և գինու սպառման մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումներ	31,909,350
	Միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների խթանմանն ու արտահանմանը միտված միջոցառումների իրականացում	92,888,942
	Կանոնադրական նպատակների համար	132,826,851
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակների համար	15,415,483
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Խաղողի տնկարկների ռեեստրի ստեղծում	49,919,800	
Աշխարհագրական նշումով գինիների համակարգի լիիրավ կիրարկում	993,000	
Կոլեկցիոն, ցուցադրական և մայրուտ այգիների մշակում, խաղողի հայկական սորտերի ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրություն	6,271,960	
Հայկական խաղողի սորտերի բույրերի հետազոտում	930,800	
Գինեգործության և խաղողագործության զարգացման ռազմավարության մշակում	7,990,000	
ՀՀ-ում հայկական գինիների վարկանիշի բարձրացման և գինու սպառման մշակույթի տարածմանն ուղղված միջոցառումներ	31,909,350	

Միջազգային թիրախային շուկաներում հայկական գինիների խթանմանն ու արտահանմանը միտված միջոցառումների իրականացում	92,888,942
Դուալ համակարգի ներդրում գինեգործական ընկերություններում	8,166,190
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	336,511,249
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	199,070,042

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ___7___ էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Digitally signed by SARGSYAN LILIT 5211930
Date: 2023.05.10 11:07:23 AMT

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	7,484	8,575
Ոչ նյութական ակտիվներ	5	-	29
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*7,484*	*8,604*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքանյութական պաշարներ	6	789	373
Դեբիտորական պարտքեր	7	86	65
Տրված կանխավճարներ	7	2,031	11
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	41,991	40,732
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*44,897*	*41,181*
Ընդամենը ակտիվներ		**52,381**	**49,785**
Կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ			
Կուտակված շահույթ		-	-
		-	-
Ընդամենը սեփական կապիտալ		-	-
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	7,484	8,575
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*7,484*	*8,575*
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	7	659	344
Ստացված կանխավճար	7	32	32
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	37,954	36,069
Արձակուրդային վճարների պահուստ	10	6,252	4,765
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*44,897*	*41,210*
Ընդամենը պարտավորություններ		**52,381**	**49,785**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**52,381**	**49,785**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Զարուհի Մուրադյան

Գլխավոր հաշվապահ
Սոնա Մարկոսյան

31 մայիսի, 2022թ.

Կ. Տ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Եկամուտ ճանաչված շնորհներ	11	345,048	239,315
Այլ եկամուտներ	12	579	3,735
Ընդամենը եկամուտներ		**345,627**	**243,050**
Ծախսեր			
Իրականացրած ծրագրեր	13	(199,070)	(131,237)
Կառավարման և վարչական ծախսեր	15	(142,684)	(105,825)
Այլ ծախսեր	14	(4,647)	(6,650)
Ընդամենը ծախսեր		**(346,401)**	**(243,712)**
Զուտ եկամուտ (վնաս)		**(774)**	**(662)**
Ֆինանսական եկամուտներ	16	862	812
Ֆինանսական ծախսեր		-	-
Ֆինանսական գործունեության արդյունք		**862**	**812**
Տարվա զուտ շահույթ (վնաս) մինչև շահութահարկը		**88**	**150**
Շահութահարկ		(88)	(150)
Տարվա զուտ շահույթ (վնաս)		**-**	**-**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Զարուհի Մուրադյան

Գլխավոր հաշվապահ
Սոնա Մարկոսյան

31 մայիսի, 2022թ.

Կ. Տ.

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	8	**40,732**	**32,306**
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Ստացված շնորհներ և նվիրատվություններ		347,111	246,077
Այլ մուտքեր		1,323	5,008
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*348,434*	*251,085*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Ձեռքբերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց		200,718	136,785
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ		58,760	44,263
Հարկերի վճարում		71,999	58,696
Սոցիալական ապահովագրության վճարներ		3,274	1,599
Այլ ելքեր		7,078	4,940
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*341,829*	*246,283*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**6,605**	**4,802**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների իրացում		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		2,873	87
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		*2,873*	*87*
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		**(2,873)**	**(87)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2021. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների ստացում		-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		333	812
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		*333*	*812*
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Փոխառությունների մարում		-	-
Տոկոսների վճարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		333	812
Դրամական միջոցների փոփոխություն		4,065	5,527
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		(2,806)	2,899
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	8	41,991	40,732

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Գործադիր տնօրեն
Զարուհի Մուրադյան

Գլխավոր հաշվապահ
Սոնա Մարկոսյան

31 մայիսի, 2022թ.

Կ. Տ.

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Խաղողագործության և Գինեգործության Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2021թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (այսուհետ նաև ՓՄԿ ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (այսուհետ նաև ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (այսուհետ նաև ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

31 մայիսի, 2022թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 10.05.2023 11:06